սերութեան ռուսաց հասաք ի Թիֆլիզ և մինչդեռ սպասէլաք արդար քննութեան, յայտնեցին մեզ թէ պարտիք աքսոր գնալ, թէ ինչ էր մեր մեղքն, մեզ չի յայտնեցին, միայն կամիմ ասել թէ մեք չքաւոր և նա հարուստ, գիտէ սուրբ կայսերութիւն Ձեր որ հարուստի խօսքն ընդունելի է քան զչքաւորինն. յետ այնորիկ այն երեք կարգաւորքն յինէն բաժանեցին. թէ ուր կորցրին ոչ գիտեմ. զիս եւս մին սարկաւագիւ և մին սպասաւորիվ աքսոր ուղարկեցին ի վանքն Սաղիանու, որ է յերկրին Շիրվանու, աւերակ և անմարդաբնակ, ունի զարխիմանարիա մի, որ վասն իւր գործին. երբեմ լինի ի վանքն, այլ միշտ շրջէ գիւղէ ի գիւղ, բայց ես մերձ ի մահ ծերունիս կամ սովեալ և անտես ի մարդկանէ և լալիվ անցուցանեմ զկեանս իմ յուսահատեցեալ գոլով, վասն զի երիցս խնդիրք եմ առաքիլ առ կուսակալն Վրաստանու, բայց պատասխանն չեմ ստացեալ. թէ ինչ է պատճառն ոչ գիտեմ. և ահա տարակուսաւոր եմ այսմ նեղութեանն։ Ապաւէն իմ Աստուած է և ապա Ձերդ սուրբ կայսերութիւնն, զի ես 70 ամաց գոլով, ահա 55 ամէ, որ ծառայիմ արարատեան եկեղեցւոյն, որոց 25 եպիսկոպոսութեան եմ ծառայել և թէ որպիսի յայտնի է ծառայութիւնք եմ ցուցեալ, բոլոր հայք գիտեն. յորժամ ի 1827 թիվ խաչակիր զօրք Ձերին կայսերութեան գնաց ի պարսից տուն վասն պատերազմի, ընդ նոսա և վիճակաւոր Ներսէս արքեպիսկոպոսն Վրաստանու, յայնժամ նա ինձ իւր փոխանորդ կարգեաց հրամանաւ պատրիարգին, և ես իմ կարեաց կօրայ յորդորեցի հայոց ազգին, որ օգնեն զօրացն, ոմանք մսացու տալով. սմին նման յորժամ խօլերայ ցաւն անկաւ, ես չթողի զհայս առանց սրբութեան և թաղման. 9 քահանայք ես և իմ սարկաւագն զ700 հայոց ազգիցն թաղեցինք, որոյ մասին ես յայտնեցի Եփրեմ պատրիարգին գրութեամբ, զի նա վարձատրեսցէ զծառայութիւնսն. 9. քահանայիցն զոմանս խաչիւ և զոմանս փիլոնիւ, և նա գրեաց ինձ թէ կարբեցի Յոհաննէս արքեպիսկոպոսն որ է այժմեայն պատրիարքն, Թիֆլիզու առաջնորդ կարգեցի և պատվիրեցի որ նա. 9. քահանայից պարգեւ տայ և քեզ սուրբ կայսերութեան ողորմութեան արժանացուսցէ. իսկ նա եկեալ 9. քահանայից յոմանց 100 մանէթ և ոմանց 200 մանէթ առեալ յետոյ պարգեւն տվաւ. ինձ էլ փո-